ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.12.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 116/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 23.11.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-116/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/2» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸի ներկայացրած հայտը և ԳԲԽ-116/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 08.12.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 23.11.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարված «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/2» ծածկագրով բանակցային ընթացակարգին, և ըստ գնահատող հանձնաժողովի 14.11.2016թ. թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետի որոշմամբ ճանաչվել է երկրորդ տեղը զբաղեցնող մասնակից, իսկ առաջին տեղը զբաղեցրել է «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը, ուսումնասիրելով «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգով ներկայացրած հայտի փաստաթղթերը, այդ թվում նաև՝ գնային առաջարկը, տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը, պարզել է, որ դրանք հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և պատճենահանելու դեպքում էլեկտրոնային թվային ստորագրությունը չի արտացոլվում փաստաթղթերի վրա:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը գտնում է, որ «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը չի բավարարում հրավերով սահմանված 7.9 կետի պահանջները, որի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, որպես բողոքի փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ, նշել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային

գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 6-րդ հոդվածի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 8-րդ կետի, 31-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն նշել է, որ նույնական փաստական հանգամանքներով բողոքի քննության ընթացքում ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը դեռևս 05.10.2016թ. կայացրել է թիվ 98/16 նախադեպային որոշումը, որում մանրակրկիտ վերլուծել են տվյալ հարաբերությունները կարգավորող իրավական ակտերն ու դրանց կիրառման շրջանակները, ինչպես նաև՝ խնդրին առնչվող այլ հարցեր:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է.

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարված «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/2» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.11.2016թ. կայացրած թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետով «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու, ինչպես նաև 18.11.2016թ.՝ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

2. Դադարեցնել «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/2» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.11.2016թ. կայացրած թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետով «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու որոշումը:

3. Դադարեցնել Պատվիրատուի կողմից «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/2» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 29.11.2016թ. ժամը 17:20-ին ԳԲԽ-116/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը և հայտնել է, որ «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի բոլոր փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և պատճենահանելու դեպքում էլեկտրոնային թվային

ստորագրությունը չի արտացոլվում փաստաթղթերի վրա, իսկ իրենց կողմից ներկայացրած հայտի փաստաթղթերը պատճենահանելու դեպքում հստակ արտացոլվում է էլեկտրոնային թվային ստորագրությունը:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.11.2016թ. թիվ 04/19.3/14944-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է հետևյալը.

«ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/2» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 1-ին («ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ), ինչպես նաև 2-րդ («Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ) տեղեր զբաղեցրած մասնակիցների հայտերը գնահատելիս առաջնորդվել է ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված մեթոդական օժանդակությամբ, ինչպես նաև «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից տրված պարզաբանմամբ և նշված հայտերում առկա փաստաթղթերի ստուգման արդյունքում էլ-փոստով ուղարկված եզրակացությամբ:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը գրությանը կից ներկայացրել է «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/2» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերը, 1-ին և 2-րդ տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը, գնահատող հանձնաժողովի թիվ 2-րդ նիստը, 09.11.2016թ ՀՀ ֆինանսների նախարարությունից թիվ 03/73.1/25145-16 գրությամբ ստացված մեթոդական օժանդակությունը, ինչպես նաև 08.11.2016թ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից թիվ 152/11.16 գրությամբ տրված պարզաբանումը և նշված հայտերում առկա փաստաթղթերի ստուգման արդյունքում էլ-փոստով ուղարկված եզրակացությունը:

3. ԳԲԽ-116/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 08.12.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 23.11.2016թ. ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-116/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-116/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/2» ծածկագրով բանակցային ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն և «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 7.9 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են ***էլեկտրոնային թվային ստորագրությամբ:***

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով) 14.11.2016թ. թիվ 2 արձանագրության 2.1 կետով կայացված որոշմամբ առաջին տեղ զբաղեցնող մասնակից է հայտարարել «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ին և երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին:

4. «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի «pdf» տիպի բոլոր էլեկտրոնային ֆայլերի վրա առկա է էլեկտրոնային ստորագրություն՝ «Certified by MAYIKYAN RAZMIK 3701550204» գրառմամբ:

5. Ի պատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարության 02.11.2016թ. թիվ 04/19.3/13841-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.11.2016թ. թիվ 03/73-1/25145-16 գրությամբ հայտնել է, որ, եթե մասնակիցը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը սահմանված կարգով հաստատել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա այն համարվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող:

6. Ի պատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարության 02.11.2016թ. թիվ 04/19.3/13842-16 գրության՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն 08.11.2016թ. թիվ 152/11.16 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված էլեկտրոնային

փաստաթղթի գործիքային վահանակում երևում են ստորագրող անձի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին տվյալներ: Էլեկտրոնային թվային ստորագրությունն անձի ձեռագիր ստորագրության էլեկտրոնային տարբերակը չէ և նախատեսված չէ համակարգչի էկրանին կամ թղթի վրա արտացոլվելու համար:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը, ուսումնասիրելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 23.11.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/2» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸի ներկայացրած հայտը հայտնում է հետևյալը.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, ***հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս ***փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:***

Հրավերի 7.9 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են ***էլեկտրոնային թվային ստորագրությամբ:***

«ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի «pdf» տիպի բոլոր էլեկտրոնային ֆայլերի վրա առկա է էլեկտրոնային ստորագրություն՝ «Certified by MAYIKYAN RAZMIK 3701550204» գրառմամբ, որտեղ երևում է նաև էլեկտրոնային ստորագրության հեղինակի անուն ազգանունը, ինչպես նաև ստորագրության վավերացման օրն ու ժամը:

Ի պատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարության 02.11.2016թ. թիվ 04/19.3/13841-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.11.2016թ. թիվ 03/73-1/25145-16 գրությամբ հայտնել է, որ, եթե մասնակիցը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը սահմանված կարգով հաստատել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա այն համարվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող:

Ի պատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարության 02.11.2016թ. թիվ 04/19.3/13842-16 գրության՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն 08.11.2016թ. թիվ 152/11.16 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված էլեկտրոնային փաստաթղթի գործիքային վահանակում երևում են ստորագրող անձի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին տվյալներ: Էլեկտրոնային թվային ստորագրությունն անձի ձեռագիր ստորագրության էլեկտրոնային տարբերակը չէ և նախատեսված չէ համակարգչի էկրանին կամ թղթի վրա արտացոլվելու համար:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀԿԳՆԲԸՀԱՇՁԲ-16/2» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 14.11.2016թ. թիվ 2 արձանագրության 2.1 կետով կայացված «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից հայտարարելու, «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու պահանջների վերաբերյալ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 23.11.2016թ. ներկայացրած բողոքն անհիմն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 23.11.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Լուսինե Ոսկանյան**

Անդամներ՝ **Սյունե Բաղալյան**

Պողոսյան Լիդիա